

## ԱՌԱՍՊԵԼ ԲՈՒԴԴԱՅԻ ՄԱՍԻՆ

### ՊԱՐԳԵՎ ԲԱՐՍԵՂՅԱՆ

*Մ.թ.ա. VI-V դդ. պատմության թատերաբեմ իջավ մի ուսմունք, որը հետագայում պետք է դառնար աշխարհի ամենահին համաշխարհային կրոնը և մեծապես ազդեր Արևելքի ժողովուրդների աշխարհայացքային-կրոնական պատկերացումների և հավատալիքների, ինչպես նաև հասարակական-քաղաքական հարաբերությունների վրա ընդհանրապես: Այդ ուսմունքը բուդդայականությունն էր՝ հնագույն համաշխարհային կրոնը:*

*Բուդդայականության հիմնադրի մասին, որը հայտնի է հիմնականում Բուդդա անունով, պահպանվել են բազմաթիվ և տարատեսակ ավանդազրույցներ, առասպելներ ու լեգենդներ: Բուդդայի կյանքի մասին հարուստ գրականության այդ առատությունը պայմանավորված է հատկապես բուդդայականության սրբազան գրականության բազմազանությամբ և տարասեռությամբ, ինչպես նաև այն կարևոր հանգամանքով, որ պահպանված բուդդայական տեքստերը մեզ են հասել տարբեր լեզուներով, խմբագրություններով և ներկայացնում են տարբեր ազգային մշակույթներ և քաղաքակրթություններ: Փաստացի, որքան որ բազմազան է բուդդայական սուրբ գրականությունը, այնքան էլ բազմազան է Բուդդայի կենսագրությունը ներկայացնող բազմաժանր գրականությունը:*

*Բուդդայի կենսագրության կարևորագույն դրվագների վերհանումը և ուսումնասիրությունը կրոնագիտական տեսանկյունից կարևորվում է այնքանով, որ առասպելական այս անձնավորության կյանքը մշտապես եղել է բուդդայականի կենսակերպի և վարքագծի չափանիշ, բարոյական կերպար և ինքնանվիրումի ու ճգնակեցության լավագույն օրինակ: Ինչպես հայտնի Փրանսիացի կրոնագետ Միշել Մալերեն է դիպուկ նշել. «Բուդդայականությունն առաջին հերթին ուսմունք է մի մարդու մասին, որի անձը պարուրված է առասպելներով... Բուդդայականությունը ուսմունք է մարդու մասին, որը բացարձակ իմաստություն է ձեռք բերել առանց Աստվածային հայտնության՝ սեփական մտորումների ճանապարհով: Այս իմաստով բուդդայականությունը հստակորեն տարբերվում է քրիստոնեությունից, որի ուսմունքը ևս ստեղծվել է մարդու կողմից, բայց Աստվածամարդու, որը կոչված էր փոխանցելու Աստվածային հայտնությունը:*

Բուզղայականությունը տարբերվում է նաև իսլամից, որի Մարգարեն՝ Մուհամեդը, Աստուծու ընտրյալն էր՝ Ղուրանը փոխանցելու համար»<sup>1</sup>:

Բուզղայի առասպելական կենսագրությունը գրվել է հարյուրամյակների ընթացքում Հնդկաստանում և հարակից երկրներում՝ բանահյուսական ժանրի տարբեր ստեղծագործությունների տեսքով: Կարելի է ասել, որ Բուզղան ունի երկու կենսագրություն՝ փաստական-պատմական և առասպելական: Առաջինը, որը վեր է հանվում եղած առասպելներից ու ավանդազրույցներից, կարճ է և հստակ. ծնվել է մ. թ. ա. 642-488 թթ. միջակայքում հնդկական Սակիա փոքրիկ թագավորության առաջնորդի ընտանիքում և ստացել Սիդհարթհա Գաուտամա անունը: Այնուհետև տեսել և հասկացել է երեք երևույթներ՝ ծերություն, հիվանդություն և մահ, որից հետո ապրել է ճգնավորի կյանքով և հայտնի դարձել Շակյամունի (սակիաների ցեղի իմաստուն) անունով: Երկարատև մեղիտացիայից հետո նրա միտքը լուսավորվել է, և նա որոշել է իր հոգևոր նվաճումները կիսել մարդկանց հետ: Առաջին քարոզը նա հնչեցրել է Բենարես (այժմ՝ Վարանաս) քաղաքում, այնուհետև թափառել ողջ Հնդկաստանով մեկ՝ քարոզելով «չորս ազնիվ ճշմարտությունների մասին» ուսմունքը: Շակյամունին մահացել է ութսուն տարեկանում՝ ըստ առասպելների ստամոքսի խանգարումից<sup>2</sup>, և նրա հուղարկավորությունից հետո աշակերտներն են շարունակել իրենց ուսուցչի գործը՝ քարոզելով ու տարածելով նոր ուսմունքը, որն ի վերջո պետք է վերածվեր համաշխարհային կրոնի:

Բուզղայի առասպելական կենսագրությունը ավելի հարուստ է և հայտնի է մտացածին և իրատեսական տարատեսակ մանրուքներով ու մանրամասնություններով: Այն ներկայանում է բազմաթիվ առասպելների տեսքով, որոնց ուսումնասիրություններն այսօր էլ շարունակվում են:

Նախ հարկ է նշել, որ Բուզղայի մասին պահպանված տարատեսակ լեգենդներն ու առասպելները, ավանդազրույցներն ու հիշատակությունները մեզ են հասել տարբեր լեզուներով և խմբագրություններով: Քանի որ բուզղայականությունը ավանդաբար զարգացել և Հնդկաստանից դուրս տարածում է գտել երկու հիմնական ուղղություններով՝ դեպի հուսիս և հարավ-արևելք, ապա բուզղայական սրբազան տեքստերը նույնպես այդ երկու ուղղություններին բնորոշ առանձնահատկություններ են ձեռք բերել: Մասնավորապես բուզղայական սրբազան գրականությունը հիմնա-

<sup>1</sup> Տե՛ս Буддизм. Энциклопедия, М., 2008, с. 37:

<sup>2</sup> Հայտնի կրոնագետ Միրչա Էլիադեն այս կապակցությամբ ներկայացնում է հետևյալ ընդհանրացնող միտքը. «Գիտնականների կարծիքով այս մանրամասնությունը չափազանց բնական է Բուզղայի հետևորդների կողմից հորինած լիցելու համար, ուստի հավանական է, որ հենց այդպես էլ եղել է»: Տե՛ս Мирча Элиаде. Словарь религий, обрядов и верований, М., 1997, с. 54:

կանում կանոնականացվել և մեզ է հասել պալի (հարավարևելյան բուդդայականություն) և սանսկրիտ (հյուսիսային բուդդայականություն) լեզուներով, որոնք հետագայում լրացվել են տիբեթերենով, չինարենով և այլ լեզուներով: Ընդունված է բուդդայական սուրբ գիրքն անվանել Տրիպիտակա<sup>1</sup> (պալի: Տրիպիտակա, թարգմանաբար նշ. երեք զամբյուղ), որը սակայն խիստ պայմանական տերմին է, քանի որ բազմաթիվ լեզուներով և բազմապիսի ժողովածուներով մեզ հասած այդ գրականությունը երբեք միատարր և ամբողջական չի եղել, և այսօր էլ չկա մի այնպիսի ժողովածու, որն ընդունելի լինի բուդդայականության բոլոր ուղղությունների ու դպրոցների կողմից:

Բուդդայի մասին առասպելների սանսկրիտով գրված հնագույն ժողովածուները պահպանվել են հիմնականում տիբեթական Վինայա կանոնում և առաջին անգամ համաշխարհային հանրությունը հայտնի դարձել Ու. Ռոկհիլի թարգմանությունում և հրատարակությունում՝ 19-րդ դարում<sup>2</sup>: Ուշ շրջանի սանսկրիտերեն տեքստերից պետք է առանձնացնել հատկապես երկուսը՝ «Մահավաստուն» և «Լալիտավիստարան»: Այս երկու ժողովածուներում նկարագրված դրվագները բավականին շատ ընդհանրություններ ունեն պալիական կանոնի նույնատիպ առասպելների հետ, որը հավանաբար առավել հին և նախկինում եղած մեկ ընդհանուր աղբյուրի արձագանքն է: Մեկ այլ սանսկրիտերեն տեքստի «Աբհինիշկրամանա սուտրայի» բնագիրը մեզ չի հասել, և այն պահպանվել է միայն չինարենով: Այս սուտրան բովանդակային առումով մոտ է Մահավաստունին, սակայն տարբերվում է նրանով, որ շարադրանքում պատմությունների հերթականությունը պահպանված է: Այնուամենայնիվ պետք է նշենք, որ այս երեք տեքստերում էլ արտացոլված են Բուդդայի մասին առասպելի զարգացման ավելի ուշ շրջանի պատումներ:

Ավելի հին են և տիբեթական Վինայային մոտ պալիական կանոնական տեքստերը (օր. «Նիդանակաթհան» և «Աբհինիշկրամանա սուտրան»), որոնք ներկայացնում են Բուդդայի կյանքի մասնրամասները մինչև նրա «Պայծառություն» հասնելը: Պալիական կանոնում առանձնահատուկ տեղ է հատկացվում «Ջատակներին», որոնցում պահպանված են մեկ ու կես հազարից ավելի պատմություններ՝ Բուդդայի նախկին կյանքերի մասին:

Բուդդայի կյանքի մասին պատմող աղբյուրներից բացառիկ է հին հնդիկ գրող, սանսկրիտերեն դասական գրականության երախտավորներից

<sup>1</sup> Տրիպիտակա հիմնականում բաժանվում է երեք ժողովածուների՝ Վինայա, Սուտրա և Աբիդհարմա:

<sup>2</sup> Մանրամասները տե՛ս Томас Э., Будда. История и легенды, М., 2003, с.19:

մեկի՝ Աշվազհոշայի (մոտ II դ.) «Բուդդայի կյանքը» (Բուդդհաչարիտա) պոեմը, որը գրվել է ուշ շրջանում, բայց բավականին հարուստ տեղեկություններ է ներկայացնում արդեն գերբնական հատկություններով օժտված Բուդդայի ոչ սովորական կյանքի դրվագների մասին<sup>1</sup>: Հարկ է նշել, որ որոշ պատմություններ կան պահպանված նաև «Ջատակների» և «Բուդդհալամասայի» մեկնություններում՝ գրված ուշ շրջանում՝ տարբեր հեղինակների կողմից:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Բուդդայի մասին պահպանված բազմաթիվ առասպելները մեզ են հասել ծագումով, ձևով և բովանդակությունում միմյանցից տարբերվող և երբեմն իրար հակասող բազմաթիվ ժողովածուների տեսքով, որոնք հնարավորություն չեն տալիս լիարժեք և արժանահավատ պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ ամենահայտնի և մեծագույն մարդկանցից մեկի իրական կյանքի մասին:

Այսօր բուդդայագիտության համար նույնիսկ մեծ բարդություն է Բուդդայի ծննդյան և մահվան տարեթիվերի ճշգրտումը: Ինչպես արդեն նշեցինք, նա ծնվել է մ. թ. ա. 642-488 թթ. միջակայքում և փաստացի ցանկացած թվագրում տեղադրվում է նշված ժամանակահատվածի մեջ: Այսօր առավել ընդունված թվագրությունը Բուդդան ծնվել է մ.թ.ա. 566 թ. և մահացել է մ.թ.ա. 486 թ.<sup>2</sup>: Կան նաև այլ թվագրություններ, որոնցից հայտնի է հատկապես Շրի Լանկայի հոգևորականության ընդունած տարեթիվը՝ մ.թ.ա. 624-544 թթ.: Հենց այս թվագրությունը ընդունելով՝ Յունեսկոյի հովանավորությամբ 1956 թ. տոնվեց Բուդդայի պարինիրվանային անցնելու 2500-ամյակը: Առկա են նաև երևակայական և ոչ արժանահավատ թվագրություններ, որոնք Բուդդայի ծնունդը երբեմն հասցնում են մարդկության պատմության անհիշելի ժամանակներ: Բավականին ուշագրավ հիմնավորմամբ և թերևս ամենաարածանահավատ թվագրությունը տալիս է էդվարդ Թոմասը՝ մ.թ.ա. 563-483 թթ.<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, որքան էլ բարդ լինի Բուդդայի ծննդյան և մահվան (կամ այս աշխարհից հեռանալու, ինչպես կասեին բուդդայականները) մասին թվագրությունը, հստակ է մի բան, նրա մասին պատմությունները ներկայացնում են կոնկրետ դարաշրջան՝ իրենց բնորոշ պատմական, հասարակական միջավայրով և առանձնահատկություններով:

<sup>1</sup> Աշվազհոշայի պոեմի մանրամասները տես **Ашвагхоша. Жизнь Будды («Буддачарита») / Книга Будды.** (антология), М., 2009, с. 165-255:

<sup>2</sup> **Галат А.** Будда Шакьямуни: Жизнь и учение. / **Книга Будды.** (антология), с. 5.

<sup>3</sup> Այս թվագրությունը հիմնվում է այն հիշատակության վերլուծության վրա, ըստ որի հնդկական Աշոկա կայսրը (մ.թ.ա. 273-232 թթ.) գահ է բարձրացել Բուդդայի նիրվանայից 218 տարի անց: Մանրամասները տես, **Томас Э.,** Будда. История и легенды, с. 61-62:

Ջատակների համաձայն Բուդդան, մինչև Սիդհարթհա արքայազնի տեսքով վերածնվելը, ունեցել է հարյուրավոր (այլ աղբյուրներով՝ հազարավոր) վերածնություններ՝ կատարելով առաքինի գործեր և աստիճանաբար հասնելով իմաստունի վիճակին, որն ընդունակ է քանդել մահերի և վերածնությունների շղթան: Իր առաքինության շնորհիվ նա հասել է բողոհիստովայի<sup>1</sup> վիճակին և երկնքից իր համար ընտրել վերջին վերածնություն վայրը: Ընտրությունը կանգնել է հյուսիսարևելյան Հնդկաստանի (ժամանակակից Նեպալ) Սակիա (սանսկրտ.՝ շակիա) ցեղի առաջնորդ Գոտամա տոհմի Սուդհոդանի (սանսկրտ.՝ Շուդհոդանի) ընտանիքի վրա: Ապագա Բուդդան ծնվել է սակիաների արքա Սուդհոդանի ընտանիքում՝ Կապիլավաստու մայրաքաղաքում:

Արքայազնի ծնունդը առասպելները ներկայացնում են հրաշագործ պատումների տեսքով<sup>2</sup>: Արքայի կին Մահամայան (մեծ տեսիլք) կամ Մայան երազում տեսնում է, թե ինչպես են երկնային չորս արքաներ իրեն՝ իր մահճակալով բարձրացնում Հիմալայներ, որտեղ ոսկե լեռներից իջած և կնճիթում լուսոս բռնած հսկա սպիտակ փիղը, որն ուներ վեց ժանիք, երեք անգամ պտտվում է իր մահճի շուրջ և դիպչում աջ թևատակին, և երեք անգամ էլ նա զգում է, որ իր մեջ ինչ որ բան է մտնում: Արթնանալով՝ Մայան պատմում է ամուսնուն իր երազը, և արքան հրավիրում է բրահմաններին, որպեսզի նրանք մեկնեն թագուհու երազը: Բրահմանները հայտարարում են, որ թագուհին շուտով ծնելու է բացառիկ հատկություններով օժտված մարդու, որը եթե ապրի պալատում՝ կդառնա Մեծ առաջնորդ, իսկ եթե դառնա ճգնավոր՝ կհասնի Բուդդայի վիճակին և իր փայլով կցրի խավարը:

Հատկապես պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ այս իրադարձություններին, ըստ Ջատակների, միջնադարյան տիբեթյան պատմիչ Բուդոն Ռինչենդոլբի «Բուդդայականության պատմության» և Լալիտավիստարայի, նախորդել են բազմաթիվ իրադարձություններ՝ կապված Բուդդայի տարբեր կյանքերի հետ<sup>3</sup>:

Այսպիսով Մայան հղիանում է և տասն միս անց, Կապիլավաստու մայրաքաղաքի մոտ՝ Լոմբինի կոչված վայրում (հետագայում բուդդայա-

<sup>1</sup> Բողոհիստովան այն մարդն է, որը հասել է նիվանայի վիճակին և նորից վերածնվել, որպեսզի օգնի մյուսներին: Բողոհիստովաների պաշտամունքը ավելի բնորոշ է հյուսիսային բուդդայականության ճյուղավորումներին, այսինքն բուդդայականության հիմնական ուղղություններից մահայանային: Այս ուղղության մանրամասները տես **Буддизм. Энциклопедия**, с. 140-159, նաև **Альбедиль М.**, Буддизм., СПб. 2006, с. 77-79 և **Эриккер К.**, Буддизм., М., 2001, с. 116-117.

<sup>2</sup> Բուդդայի մասին առասպելների ընդհանրական շարադրանքը տես **Галат А.**, Будда Шакямуни: Жизнь и учение, с. 8-65, ինչպես նաև **Ольденбург С.**, Жизнь Будды, индийского Учителя Жизни. / **Книга Будды**. (антология), с. 99-131.

<sup>3</sup> **Галат А.**, Будда Шакямуни: Жизнь и учение, с. 10-21.

կանների առաջին սրբավայրը) ծնվում է արքայազնը: Նորածինը ծնվելուց հետո անմիջապես կանգնում է, կատարում յոթ քայլեր՝ հուսիսային ուղղությամբ, այնուհետև բարձր ձայնով, ինչպես առյուծի մունչոցը, հայտարարում է. «Ես մեծագույնն եմ և լավագույնն աշխարհում: Սա իմ վերջին ծնունդն է»<sup>1</sup>: Այդ օրվանից են սկսում իրենց գոյությունը յոթ այլ երևույթներ ևս՝ Պայծառություն ծառը (Բողհի), Ռահուլի մայրը (արքայազնի ապագա կինը և որդու մայրը), գանձերով լի չորս սկահակներ, արքայազնի փիղը, ձին՝ Կանտական, կառապան Չհանդան և նախարարի որդի Կալուդայինը: Երևի թե պարզ է, որ այս բոլորը Բուդդայի կյանքին առնչվող պատմություններում կարևոր դերակատարություն ունեն:

Արքայազնի ծնունդը ուղեկցվում է բազում հրաշքներով՝ կույրերը տեսողություն են ձեռք բերում, խուլերը՝ լսողություն, համբերը՝ խոսելու ունակություն, իսկ հիվանդները առողջանում են, ինչպես նաև տեղում է հրաշալի անձրև և այլն: Արքայազնը ծնվում է անսովոր գեղեցկությամբ՝ արեգակնային լույսով ողողված, ոսկեգօծ մարմնով, և իր վրա կրում է «մեծ մարդու» 32 նշաններ: Լալիտավիստարան դրանք նկարագրում է մանրամասն, իսկ Աշվագհոշան՝ հատկապես դրանցից կարևորները<sup>2</sup>: Նրա կրունկներին դաջված էին անիվներ, ձեռքերի մատները երկար էին, մաշկը՝ ոսկեգօծ, աչքերը՝ շափուղյա, մազերից յուրքանչյուրը թեքված էր աջ կողմ, մազերը հյուսված էին գլխի գագաթին, ուներ երկար ու գեղեցիկ լեզու և այլն: Այս հիմնական նշանների կողքին առասպելները նշում են նաև 80 երկրորդական նշաններ՝ «... պղնձագույն եղունգներ, սիմետրիկ մատներ, թաքնված կոճեր, հավասար կողեր, ձգված փոր, խոր պորտ և այլն»<sup>3</sup>: Ուսումնասիրելով նորածինն՝ Ասիտա անունով իմաստունը գուշակում է, որ նա կդառնա մեծագույն ճգնավոր, կհասնի պայծառության և կքարոզի նոր ուսմունք<sup>4</sup>:

Արքայազնի ծնունդից հետո հինգերորդ օրը տեղի է ունենում անվանակոչության արարողությունը: Պալիական Նիդանակաթհայում սկզբում չի նշվում, թե ինչ անուն տվեցին արքայազնին, սակայն հետո օգտագործվում է Սիդդհարթհա անունը, Լալիտավիստարայում նշվում է, որ նրան կոչեցին Սիդհարթհա՝ «նա, ում նպատակը իրագործված է», իսկ ուշ շրջանի աղբյուրներում և Մահավաստում, որպես կանոն, օգտագործում են Սարվարտհասիդհա՝ «նա, ով հասել է իր բոլոր նպատակներին», անունով: Ըստ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>2</sup> Մանրամասները տես Բուդդիզմ. Էնցիկլոպեդիա, с. 48-50, նաև Բ. Աшвагоша. Жизнь Будды («Буддачарита»), с. 171-174.

<sup>3</sup> Альбедиль М., Буддизм., с. 18.

<sup>4</sup> Томас Э., Будда. История и легенды, с. 23.

Լալիտավիստարայի, արքայազնի այդ անունը հայրը՝ Սուղհոդանն է տվել նրան, նկատի ունենալով այն, որ ինքն իր ցանկություններին հասել է:

Արքայազնի ծնվելուց հետո յոթերորդ օրը նրա մայրը մահանում է, իսկ երեխայի դաստիարակությունը վերաբերում է մորաքույրը՝ Մահապրաջապատին: Սուղհոդան արքան, հաշվի առնելով գուշակությունները, որոշում է որդու համար ապահովել այնպիսի կյանք, որը նրան հեռու կպահի կյանքի դաժան կողմերից: Հատուկ նրա համար կառուցվում են բարձր պարիսպներով շրջափակված երեք պալատներ՝ տարվա երեք եղանակների համար, որտեղ պետք է անցկացնեն իր կյանքը ապագա Բուդդան: Սիդհարթհային դաստիարակում են ինչպես իսկական արքայազնի. նա կրում էր ամենաթանկարժեք հագուստը, գիշեր-ցերեկ նրա գլխին պահում էին սպիտակ հովանոցներ՝ քամուց, տապից և փոշուց պաշտպանելու համար: Արքան հոգում է, որպեսզի իր որդին երբեք չտեսնի վիշտ, տառապանք, դժբախտություն և այլ բացասական երևույթներ: Նրան շրջապատում էին երիտասարդ ծառաներ և պարուհիներ, որոնք նրա կյանքը լցնում էին խինդով, ուրախությունով, լիությունով և կյանքի նկատմամբ կատարյալ վերաբերմունքով:

Երբ արքայազնը հասունանում է, 16 տարեկանում նրան ամուսնացնում են հարևան թագավորության արքայադստեր Յաչոդհարայի (Փառքի պահապան) հետ, որին համարում էին ամենագեղեցիկը հարսնացուների մեջ: Արքայադստեր այս անունը հանդիպում է գրեթե բոլոր աղբյուրներում (Մահավաստու, Աշվագհոչայի պոեմ, պալիական տեքստեր, իսկ Լալիտավիստարայում՝ Յաչովատի), իսկ ուշ շրջանի աղբյուրներում նրան անվանում են նաև Ռահուլի մայր, Բիմբա կամ Գոպա, սակայն պետք է նշել, որ հնագույնը հավանաբար առաջին տարբերակն է, որն ամենատարածվածն է<sup>1</sup>: Շուտով ծնվում է արքայազնի որդին, որին կոչում են Ռահուլ, և երիտասարդ ընտանիքի երջանկությունը դառնում է ամբողջական:

Սակայն, որքան էլ Սիդհարթհան հեռու էր ռեալ իրականությունից, այնուամենայնիվ տեղի է ունենում այն, ինչ կանխորոշված էր: 29 տարեկանում նա պետք է հանդիպեր նախանշված չորս երևույթներին: Ըստ առասպելների այդ հանդիպումները կազմակերպել են աստվածները, որպեսզի արքայազնին ոգեշնչեն՝ կանգնելու հոգևոր ազատագրության և ճանաչողություն ուղղված վրա:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 91-92:

Չորս երևույթների հետ հանդիպումը տարբեր աղբյուրներ տարբեր կերպ են նշում, սակայն բոլորն էլ միահամուռ են մի հարցում, դրանք նույն չորս երևույթներն են<sup>1</sup>:

Մի անգամ արքայազնը ցանկություն է հայտնում դուրս գալու պալատից, և իր կառապան Չհանդայի հետ, կառքով դուրս է գալիս շրջագայության:

Առաջին անգամ շրջագայելով մայրաքաղաքի փողոցներով՝ Սիդհարթհան կանգնեցնում է ձիերը և ուշադրություն դարձնում մահակի օգնությամբ մի կերպ քայլող անատամ, տանջահար, ալեհեր մի ծերունու վրա: Երբ ծառային հարցնում է, թե ով է այս մարդը և ինչու<sup>2</sup> է այդ վիճակում, ծառան պատասխանում է, որ ծերունի է և տարիներն են նրան դարձրել այդպիսին: Արքայազնը հարցնում է, թե ինքն էլ է այդպիսին լինելու և ստանում է պատասխան, որ բոլորն էլ ծերանալու են:

Հաջորդ երկու օրերին արքայազնը հանդիպում է բորոտությամբ տառապող հիվանդի (հասկանում է, որ հիվանդությունը հասանելի է բոլորին՝ անկախ հարստությունից և տիտղոսներից) և հանգուցյալի (հասկանում է, որ բոլոր մարդիկ մահկանացու են):

Չորրորդ օրը նա հանդիպում է համեստ հագուստով, հանգստություն, արժանապատվություն և անտարբերություն արտահայտող դեմքով մի մարդու: Այդ մարդը ոչ մի ուշադրություն չի դարձնում արքայազնի վրա և շարունակում է իր ճանապարհը: Այն հարցին, թե ով է այդ մարդը, կառապանը պատասխանում է, որ ճգնավոր է, որը կատարելագործում է իր միտքը՝ վերածնությունների շղթայից ազատագրվելու համար: Եթե առաջին երեք հանդիպումները նրան հուշում են, որ կյանքն անկատար է, անցողիկ և տառապանքի կնիքը առկա է բոլորի մոտ, ապա չորրորդ հանդիպումն էլ ավելի մեծ ազդեցություն է թողնում նրա վրա: Կյանքի, մահվան, մարդու կոչման և վերջնական նպատակի մասին մտորումները արքայազնին հանգիստ չեն տալիս և փրկության ուղիների որոնումը և ճգնակյացի կերպարը նրան հանգեցնում են վերջնական վճիռ կայացնելու: Նա որոշում է դառնալ ճգնավոր և այդ ճանապարհով գտնել իմաստությունն ու փրկությունը:

Վերջնական որոշում կայացնելուց հետո մի գիշեր, Չհանդայի ուղեկցությամբ, արքայազնը հեռանում է պալատից և ուղևորվում դեպի հարևան թագավորություն: Հասնելով սահմանագծին՝ նա հանում է իր

<sup>1</sup> Չորս երևույթների հետ հանդիպումների մասին մանրամասն տե՛ս **Альбедиль М.**, Буддизм., с. 20, **Томас Э.** Будда. История и легенды, с. 92-95, **Галат А.** Будда Шакаямуни: Жизнь и учение, с. 31-32:



արքայական հագուստը, կտրում երկար մազերը, հագնում ճգնավորի ցնցոտիներ և միայնակ անցնում հարևան թագավորություն<sup>1</sup>:

Իր ճգնակեցություն առաջին շրջանում նա դառնում է թափառաշրջիկ ճգնավորներից մեկը, որոնք այն ժամանակվա Հնդկաստանում բավականին շատ էին: Վեց տարիների ընթացքում արքայազնը թափառում է անտառներում տրվելով ճգնակեցության, շփվում է տարբեր քարոզիչների ու ուսուցիչների հետ, ձեռք բերում հինգ հետևորդ (բհիկշու): Այդ ընթացքում նա զբաղվում է հոգևոր կատարելագործմամբ և ֆիզիկական ցանկությունների ոչնչացմամբ: Նա ձգտում է որքան հնարավոր է փոքրացնել աշխարհիկ կյանքից կախումը, մեռցնել ֆիզիկական ցանկությունները և մեղիտացիայի միջոցով հասնել հոգևոր կատարելության: Ֆիզիկականը վերացնելու ամենավերջին քայլը՝ սնունդից հրաժարումը նույնպես ոչինչ չի տալիս և, ինչպես արքայազնն է նշում, ինքը «... հասել էր այն աստիճանին, որ իր փորին ձեռք տալով՝ զգում էր ողնաշարը»<sup>2</sup>: Երբ արքայազնին մնացել էր կենսական ուժի «հազարերորդ բաժինը», նրան է հայտնվում Ինդրա աստվածը: Ըստ ավանդության, եռալար ջնարը նվագելով, Ինդրան ցույց է տալիս արքայազնին, որ միայն մեջտեղի լավ պրկված լարն է արձակում գեղեցիկ և ուժգին ձայն, իսկ թույլ լարը չի կարող այդպիսի ձայն հանել, այն ընդամենը պոկվում է: Այդպիսին է նաև մարդը. նա, ով խուսափում է ծայրահեղություններից, կարողանում է հասնել նպատակին<sup>3</sup>: Արքայազնը հասկանում է, որ ճշմարտությունը ծայրահեղությունների մեջտեղում է և ճշմարտության ուղին պետք է փնտրել կյանքի երկու հակադիր բևեռների միջև: Արքայազնը սկսում է նորից սնվել<sup>4</sup>, վերականգնում է ուժերը և նոր թափով սկսում ճշմարիտ ուղու փնտրտուքը: Այս քայլը անվստահություն է առաջացնում աշակերտների մոտ և տեսնելով, որ իրենց ուսուցիչը հեռանում է որդեգրած ուղուց՝ աշակերտները նրանից հրաժարվում են, թողնում մենակ և հեռանում Վարանաս (Բենարես) սրբազան Գանգեսի ափերը:

Մնալով միայնակ և շարունակելով փնտրել հոգևոր կատարելության սեփական ուղին՝ արքայազնը ամբողջությամբ խորասուզվում է մեղիտացիայի մեջ՝ լոտոսի դիրքով նստելով սրբազան Բոդհի (պայծառության ծառ) տակ: Ըստ ավանդության այստեղ են տեղի ունենում նաև Բուդդայի

<sup>1</sup> Արքայազնի ուղևորության կոնկրետ վայրը հայտնի չէ, և պալիական ու սանսկրիտերեն աղբյուրներում նշվում են տարբեր տեղանուններ՝ քաղաքների, գետերի, տարածքների: Մանրամասները տես **Томас Э.**, Будда. История и легенды, с. 106-107:

<sup>2</sup> **Буддизм.** Энциклопедия, с. 51.

<sup>3</sup> **Альбедиль М.**, Буддизм., с. 21.

<sup>4</sup> Մանրամասն տես **Галат А.**, Будда Шакаямуни: Жизнь и учение, с. 44-45:

փորձությունները: Չար ուժերի արքա Մարան (բառացի՝ մահ) մահվան, կրքերի ու խավարի աստվածը, փորձությունների է ենթարկում արքայազնին՝ նրան գլխավոր նպատակից շեղելու համար: Նա արքայազնի վրա է ուղարկում չար դեերին, այնուհետև իր գեղեցիկ աղջիկներին, առաջացնում է ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ, սակայն հզոր ճգնակյացը ոչինչ նույնիսկ չի նկատում, և նրան ոչինչ չի շեղում ճշմարիտ ուղուց՝ լուսավորության և ճշմարտության ճգտումից<sup>1</sup>:

Ի վերջո, մեղիտացիայի 49-րդ օրը, Սիրդհարթհայի միտքը լուսավորվում է, պայծառանում, նրան հասանելի են դառնում չորս ազնիվ ճշմարտությունները և նա հասնում է նիրվանային: Այս դրվագը համարվում է նրա կյանքի բարձրակետը: Այդ պահին Սիրդհարթհա Գաուտաման անհետանում է և աշխարհ է գալիս Բուդդան (պայծառացած, իմաստության հասած): Ինչպես Վ. Անդրոսովն է գրում. «Այստեղ նա ոչ միայն բացահայտեց կեցության և աշխարհակարգի բոլոր գաղտնիքները, այլև հասավ տառապանքներից և նոր վերածնություններից վերջնական ազատագրության: Նա հասավ նիրվանային: Այդուհետ բացարձակ հանգստի այդ անհողողող վիճակը ընդմիշտ կլինի նրա հետ: Այլևս չկա վախ ոչ անցյալի, ոչ ներկայի, ոչ էլ ապագայի հանդեպ: Չկա այլևս սեփական անձի հանդեպ անբավարարություն, չկան ցանկություններ, չկան կրքեր. ահա թե ինչպիսին է Պայծառությունը, Բուդդա լինելը: Չկա այլևս ճգնակյաց Գաուտաման: Կա նոր էակ: Նա ո՛չ աստված է, ո՛չ գերաստված, ո՛չ էլ մարդ կամ երկրային կամ ստորերկրային արարած: Այդ էակը Բուդդան է»<sup>2</sup>:

Հասնելով պայծառության՝ Բուդդան Բուդհի ծառի տակ անցկացնում է տարբեր աղբյուրներով, յոթից քառասունինը օր: Նա վայելում է իր նոր վիճակը և դեռ տատանվում է՝ քարոզել նոր ուսմունքը մարդկանց, թե ոչ: Այդ հարցում, ըստ Աշվագոստայի, նրան օգնում է Բրահմա աստվածը, որը նրան խորհուրդ է տալիս փրկության ուղին հասանելի դարձնել բոլորին<sup>3</sup>: Բուդդան իր առաջին քարոզը հնչեցրել է Բենարեսում՝ Եղջերուների պուրակում, որի ունկնդիրները եղել են նրանից հեռացած հինգ աշակերտները, որոնք միաժամանակ դառնում են առաջին վանականները: Առաջին քարո-

<sup>1</sup> Հատկանշական է, որ Բուդդայի փորձությունների մասին պատմությունները հիմնականում հաղորդվում են Ձատակների միջոցով, իսկ մյուս տեքստերը կամ լռում են, կամ էլ շատ քիչ բան են ներկայացնում, ինչը կարող է նշանակել մի բան, որ այդ փորձությունների նկարագրությունները վաղ շրջանի ժողովածուներում բացակայել են և ուշ շրջանի լրացումներ են: Մանրամասն տես Տոմաս Յ., Будда. История и легенды, с. 112-140: Տես նաև Գալատ Ա., Будда Шакьямуни: Жизнь и учение, с. 46:

<sup>2</sup> Андросов В. П., Будда Шакьямуни и индийский буддизм, М., 2001, с. 89. Տես նաև Торчинов Е. А., Введение в буддологию. Курс лекций. СПб., 2000, с. 12-13:

<sup>3</sup> Ашвагоша. Жизнь Будды («Буддачарита»), с. 228.

զուժ Բուզղզան խոսուժ է չորս ազնիվ ճշժարտուժյուժնննրի և Ուսժոժննքի աժնիվի պտուժյտի (դէս «Դ՛հարժմայի աժնիվի պտուժյտի սուժտրան» է, սանսկրտ. Դ՛հարժմաչաղրապրաժարտանասուժտրա) մասին: Այդ օրը բուժղզայաղանննրը ստացան իրենց ուսժոժննքի Երեք գանժերը (Տրիրատնա) Բուղղային, ուսժոժնը (դ՛հարժմա) և վանսկան համայնը (սանգ՛հ):

Մոտ 45 տարի Բուժղզան և աղակերտները քարոզուժ են նոր ուսժոժննքը Հնղկաստանի տարաժքուժ: Ժամանակի ընժացքուժ Բուժղզայի հետեղղննրի թիվը հասնուժ է 500-ի, որոնց թվուժ առանժնանուժ են նրա սիրելի աղակերտները՝ Անանղը, Մահակաղյապան, Սուբհուժտին և նուժյնիսկ իր նախկին հակառակորղ գարժիղը՝ Դեղատան, որին Բուժղզայի դեժ դուրս գալու համար ի վերղո հեղացնուժ են համայնքից: Ըստ աժանղուժյան իր քարոզղուժյան ընժացքուժ Բուժղզան գալիս է նաև սակիաների երկիր, որտեղ նրան ուրախուժյամբ դիմավորուժ են հարաղատներն ու բարեղամները: Այստեղ ևս նա ձեղք է բերուժ մեժ թվուժ հետեղղներ, իսկ Սուղհուղան արքան նրանից երղուժ է վերցնուժ, որ համայնքի շարքերը երբեք չի ընղուժի ընտանիքի միակ գավակին՝ առանց ժնողնների համաժայնուժյան (այս երղուժը մինչ օրս պահպանվուժ է բուժղզայաղան երկրննրուժ): Մի քանի առասպելներ նղուժ են, որ Բուժղզայի կինն ու որղին ևս դարժել են բուժղզայաղաններ (հյուսիսային բուժղզայաղանուժյան մեղ այս առասպելները չկան):

Բուժղզան իր կյանքի մայրամուժին, 80 տարեկանուժ, հեղանուժ է երկրային կյանքից դեպի վերղնական նիրվանա (պարինիրվանա): Հեղանալու վայրը դառնուժ է Վարանաս քաղաքի մոտ գտնվող Կուղչինաղարա բնակավայրը: Այստեղ Ձուժղա աժուժնուժ մեկը նրան հյուղընկալուժ է իր տանը և հուղրասիրուժ (ոչ դիտավորյալ) հին մսուժ, որի արղյուժնըժ Բուժղզայի մոտ առաղանուժ են ստամոքսի ցավեր, որոնք էլ, ըստ աժանղուժյան, դառնուժ են մահվան պատժառ:

Ձգալուժ մոտալուժտ մահը՝ Բուժղզան հրաժեղտ է տալիս աղակերտներին և աղյուժի դիրք (պաղղուժ է աղ կողքին, գլուղը դեպի հարավ, դեժքուժ արեկը, աղ ձեղքը գլխատակին) ընղուժնելուժ խորասուղղվուժ է հայեցղուժյան մեղ: Մահվանից հետո նրա մարժինը կիղղուժ են և, ինչպես առասպելներն են պատմուժ, աղակերտներից մեկը խարուղկի միղից հանուժ է Բուժղզայի ատամը՝ բուժղզայաղանուժյան մեժագղուժյն սրբագան մասուժննքը, որն այսօր պահվուժ է Շրի Լանկայուժ:

Այսպիսին են համաղխարհային մեժագղուժյն կրոններից մեկի հիմնաղրի կյանքը և գորժոժննուժյուժնը ներկայացնող առասպելները, որոնց շնորհիվ այսօր էլ բաղմամիղիոն բուժղզայաղաններ հետեղղ են փրկղուժյան այն ողղուժն, որը հայտնագորժել է Բուժղզան: Այս առասպելների շնորհիվ են Բուժղզայի կյանքի այս կամ այն դրվագին առնչվող վայրերը դարժել բուժղզայաղ-

կանների գլխավոր սրբավայրերը. Լուսբինին, որտեղ ծնվել է Բուզղան, Բողհ Գայան, որտեղ նա հասել է պայծառության, Սարնատհը (եղջերուների պուրակը), որտեղ առաջին անգամ քարոզել է նոր ուսմունքը և մահապարհ-նիրվանայի (մեծ և վերջնական նիրվանայի) վայրը՝ Կուշինագարայում: